

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՐՇԱԿ ՔԵՐՈՒՅԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-ԻՑ 13-Ը ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԱԼՄԱԹԻ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝** Արշակ Քերոբյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** Ղազախստանի Հանրապետություն, ք. Ալմաթի 2023 թվականի ապրիլի 11-ից 13-ը:

4. **Հրավիրող կողմը՝** ԱՄՀ, Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոն (CCAMTAC)

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցել «Հանրային ֆինանսների թվայնացում և թվային հանրային ենթակառուցվածքներ» թեմայով աշխատաժողովին, որի շրջանակներում ներկայացվել են հանրային ֆինանսների կառավարման համակարգի թվայնացման ժամանակակից միտումները, նորարարական մոտեցումները, պետական թվային ենթակառուցվածքները, ՊՖԿ թվային վերափոխումների կառավարման մոտեցումները: Խմբային գործնական աշխատանքի շրջանակներում քննարկվել են մասնակից երկրների կողմից աշխատաժողովի ընթացքում ներկայացված թվայնացման գործիքների՝ DPI, GOVTech, Government platform և այլնի կիրառության հնարավորության հարցերը:

6. **Քննարկված թեմաները՝**


1. Հանրային ֆինանսների թվայնացում. գործընթացն ուղեկցող հիմնական դժվարությունները և մարտահրավերները,
2. Թվային վերափոխման կառավարում. կիբեր վտանգների կառավարում,
3. Պետական թվային ենթակառուցվածքներ (Digital Public infrastructure). հիմնական մոտեցումները և դրանց կիրառությունը
4. Պետական թվային ենթակառուցվածքների կիրառության հնդկական փորձը,
5. Պետական թվային ենթակառուցվածքների ներդրման առաջարկներ. ֆինտեխը ՊՖԿ ոլորտում
6. Մասնակից երկրների հանրային ֆինանսների կառավարման թվայնացման մոդելներ:

7. **Հանդիպումները, ելույթները՝**

Քննարկումներ են եղել դասընթացի թեմայի շրջանակներում, շնորհանդեսի տեսքով ներկայացվել են մասնակից երկրների՝ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ղազախստանի, Մոնղոլիայի, Ղրղզստանի, Պակիստանի հանրային ֆինանսների կառավարման ավտոմատացման գործող համակարգերը: Աշխատաժողովի ընթացքում շնորհանդեսի տեսքով ներկայացվել է ՀՀ ՊՖԿ ոլորտում ներդրված և գործող ավտոմատացման ծրագրերը, ՀՀ կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) ներդրման ուղղությամբ իրականացված քայլերը, ձեռքբերումները, ԿՖԿՏՀ ներդրման ընտրված մոդելը և առաջիկա անելիքները, ավտոմատացման ճանապարհին ի հայտ եկած խնդիրները և ռիսկերը:

#### **8. Ստորագրությունը, ամսաթիվը.**

Արշակ Քերոբյան

  
\_\_\_\_\_  
(Ստորագրություն)

**19 ապրիլ, 2023թ.**